




ՌԻՍԿՆԵՐԻ ՀԱՅՆ

ՀԱՄԱՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ
ՀՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ, 2009


ԹԻՎ 1 (24)

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ


- > Ինչպե՞ս է հակադարձում Հայաստանը Վրաստանի հայափախած քաղաքականությանը
- > Թուրքիան ցեղասպանում է սեփական երեխաներին «Շիկահեր հարս -ի միջոցով
- > Հիմա բանակ տանո՞ւմ են



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ



21-րդ դարի ամենամեծ մարտահրավերը՝ անպատժելիությունը



Միջազգային իրավունքի բոլոր նորմերով՝ ազգային պատկանելության պատճառով մարդկանց կյանքից զրկելը ցեղասպանություն է: Ուրեմն ինչպե՞ս բնորոշել այն, ինչ տեղի ունեցավ 21 տարի առաջ Սումգայիթում, որտեղ հայկական պատկանելությունը համարվում էր մահացու մեղք: 1988-ին Բաքվում ու Սումգայիթում 3 օրերի ընթացքում աննկարագրելի դաժանությամբ 100-ից ավելի հայեր սպանվեցին, մինչ պաշտոնական տվյալներով՝ այդ թիվը եղել է ընդամենը 26:

ԽՍՀՄ ֆեմիդան ցեղասպանության այս արարքը դիտեց որպես «կենցաղային խուլիգանություն» և ընդամենը տարբեր պատժաչափերով դատապարտեց մի քանի ադրբեջանցի ելուզակի: Մեկին, այնուամենայնիվ, ցուցադրաբար դատապարտեցին մահապատժի, սակայն նա էլ, շատ չանցած, ազատ արձակվեց. դրանով իսկ Սումգայիթում թաղվեց հայ-ադրբեջանական հակամարտության քաղաքակիրթ լուծման հույսը, և հակամարտությունը տեղափոխվեց ռազմական մարտնչունի փուլ: Խորհրդային կենտրոնական իշխանությունը թույլ չտվեց աշխարհին տեղեկանալ ամբողջ ճշմարտությանը: Կենտրոնական հեռուստատեսությամբ հեռարձակված անվանի լրագրող Յենրիխ Բորովիկի «Դիրքորոշում» հաղորդաշարը ճշմարտության միակ բռնկումն էր: «27-ին սկսեցին անկարգությունները: Բայց այդ օրը զոհեր չեղան, - պատմում է լրագրողը՝ շարունակելով, - եթե 27-ին քաղաքում լինեին միլիցիայի խմբեր կամ Սումգայիթ հասնեին զորքեր, ամեն ինչ կարելի էր կանխել...»: Ամերկբա է, որ Սումգայիթը Վանի, Կարիմի, Երեսիայի ու այլ հայկական գավառներում իրագործված թուրքական ցեղասպանության ադրբեջանական բնորոշ էր: 1915-ի չղատապարտումն էր եղեռնագործության շարունակման պատճառը: Անպատժելիությունն ու միջազգային հանրության կողմից եղեռնագործությանն արժանի գնահատական չտալը նոր ոճիրներ ծնեց հայ ժողովրդի մի մասի նկատմամբ: Հայերին ու ամեն հայկականը բնաջնջելու թուրք-ադրբեջանական մոլուցքը չնահանջեց նույնիսկ մեր օրերում: Պարտադրած պատերազմում պարտություն կրածի հոգեբանությունը կրող Բաքուն իր ճիրաններում մեծացրած զինվորականի ձեռքով կացնահարեց նույնիսկ քնած հայ սպային՝ Գուրգեն Մարգարյանին:

Ադրբեջանում հերոսացրին Ռամիլ Սաֆարովին՝ կացնահարին, Թուրքիայում՝ Թալեթին: Կեղծիքների գործում հմտացած Բաքուն ամեն տարի այս օրերին ճգնում է հակակշռել միջազգային հանրության հիշողությունը ադրբեջանցիների հորինված ցեղասպանությամբ և այս ամենն անում է դասական բեմին վայել համոզականությամբ ու տխուր ծիսակարգի բոլոր կանոններով: Այսօր պայքարում ենք Ջուղայում կատարվածի դատապարտման համար, բայց չպետք է մոռանալ, որ ադրբեջանցիներն աշխարհի երեսից սրբել են հայկական այլ հուշարձաններ Ադրբեջանում, գրավել Արծվաշենում: Նույն Նախիջևանում ոչնչացվել է Աբրակունիսի սբ. Կարապետ Եկեղեցին, որը 1980-ին դեռ կանգուն էր: Մեկ բան պարզ է միայն. 88-ի փետրվարի անմեղ զոհերը մեզ վերափոխեցին, լռելը հանցագործություն է: Բանակցային սեղանների շուրջ Արցախի կարգավիճակը քննարկող ադրբեջանցի կամ նավթադոլարների բույրով ազահացած այլազգի դիվանագետները պետք է լավ հասկանան, որ Լեռնային Ղարաբաղի համեստ կարգավիճակն անկախությունն է մոտ ապագայում և Հայաստանի մի մասը՝ հեռանկարում: Գուրգեն Մարգարյանի սպանությունն Ադրբեջանում օրեցօր սաստկացող հայատյացության և հայաստանատյացության պետական քաղաքականության հետևանք է, և այդ վայրագ սպանության նկատմամբ Ադրբեջանի հասարակության արձագանքը հենց այդ քաղաքականության արտացոլումն է: Մենք և ադրբեջանցիները տարբերվում ենք աշխարհընկալմամբ, ինչքան էլ որոշ քաղաքական գործիչներ փորձեն «Տոլման» նշել որպես համանման ավանդույթների օրինակ: Մշակութային առանձնահատկություններն ակնհայտ են. երկու ժողովուրդները չեն կարող ապրել կողք կողքի: Եթե մենք ընդունակ լինեինք ոճրագործության, կքանդեինք Շուշիի մզկիթը, որն առաջօր կանգուն է: Կքանդեինք նաև Ադղամի ադրբեջանական աղոթատեղին, հատկապես Ջուղայի վանդալիզմից հետո...



Ինչպե՞ս է հակադարձում Հայաստանը Վրաստանի հայահալած քաղաքականությանը

Ախալցխայի Հայ երիտասարդական կենտրոնում պարային խմբակը պարապմունք էր անցկացնում, երբ ոստիկանները ներխուժեցին դահլիճ ու պահանջեցին կենտրոնի տնօրեն Գրիգորի Մինասյանին: Աշակերտների և ուսուցիչների մոտից խլեցին բջջային հեռախոսները, շենքի մուտքերը փակեցին, կենտրոնի համակարգիչներից բռնագրավեցին տեղեկատվություն պարունակող կրիչները, գրադարանից վերցրին որոշ գրքեր: Շատ չանցած Ասպինձա քաղաքի շրջանում թբիլիսից ժամանած իրավապահները



կանգնեցրին երթուղային մի տաքսի, ձերբակալեցին ուղևորին՝ Գրիգորի Մինասյանին: 2 ժամ անց նույն ոստիկանները թաղման ժամանակ ձերբակալեցին «Շառլ Ազնավուր բարեգործական կազմակերպության նախագահ Սերգեյ Հակոբջանյանին: Ձերբակալվածները տեղափոխվեցին մայրաքաղաք Թբիլիսի: Վրաստանի ՆԳՆ հաղորդագրության համաձայն՝ հարուցվել է քրեական գործ՝ «անօրինական զինված կազմավորումների ստեղծման և լրտեսության մեղադրանքով: Ի դեպ, խուզարկությունից հետո ձերբակալվածների բնակարանում զենք չի հայտնաբերվել: Նախքան դատավարությունը՝ երկու ամսվա ընթացքում, կիրականացվի հետաքննություն, և միայն դատավարությունից հետո պարզ կլինի ձերբակալ-



վածների հետագա վիճակը: Նշեն, որ մեղադրանքը բավականին լուրջ է, և նման պարագայում մեղադրյալներին սպառնում է 20 տարուց մինչև ցմահ բանտարկություն: Ինչպես և սպասվում էր, վրացական կառավարությունը դեռ չի ավարտել


Սամցխե-Ջավախքում ձերբակալությունների շարքը: Մինասյանի և Հակոբջանյանի ձերբակալությունից մի քանի օր հետո ձերբակալվեց Ախալցխա քաղաքի բնակիչ Գրիշա Ավագյանը /Գիժո/՝ այսպես կոչված դավադրության մասնակցության և անօրինական զենք պահելու մեղադրանքով, չնայած որ մեղադրյալի մոտ զենք չի հայտնաբերվել: Հետապնդման այս գործելաոճը բնավ առաջինը չէ Սամցխե-Ջավախքի հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների նկատմամբ: 2008 թվականի հուլիսի 21-ին ձերբակալվեց «Միացյալ Ջավախք ժողովրդավարական դաշինքի ղեկավարներից Վահագն Չախալյանը, ում ներկայացվել է մեղադրանք՝ Վրաստանի քրեական օրենսգրքի մի քանի կետերի համաձայն: Դատական գործընթացն անհասկանալի պատճառներով ցայսօր ձգձգվում է: Հատկանշականն այն է, որ ձերբակալվել է հենց Ախալցխայի երիտասարդական կենտրոնի տնօրենը, որտեղ բնակչության միայն 25 տոկոսն է հայ, հետևաբար ազգային և մշակութային կյանքը գլխատել և վախի ու անվստահության մթնոլորտ առաջացնելն էլ ավելի հեշտ կլինի, մասնավորապես եթե նկատի ունենանք, որ նման երիտասարդական



կազմակերպությունները միավորում են Սամցխե-Ջավախքի հայ երիտասարդությանը, իսկ վերջին ժամանակներս այս կազմակերպությունները բավականին ակտիվ են իրենց գործունեության մեջ: Մ'րոգ, մինչև ե՞րբ է Հայաստանի կառավարությունն աչք փակելու շարունակական բնույթ կրող վրացական հալածանքների հանդեպ: Այն, որ Ջավախքը կանգնած է հայաթափության խնդրի առաջ, արդեն իրականություն է, և զարգացումների նման ընթացքը Սամցխե-Ջավախքին բաժին է հասցնելու Նախիջևանի ճակատագրից: Չմոռանանք նաև հայկական եկեղեցիների վրացականացման հարցը՝ Վրաստանի և հատկապես՝ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում:

Անահիտ Հարությունյան

Թուրքիան ցեղասպանում է սեփական երեխաներին «Շիկահեր հարս -ի միջոցով




Թուրքական մամուլն իր առաջին էջերի վրա անգիշխում պայթար էր հայտարարել պետության հակահայկական քաղաքականության դեմ: Առիթը իշխող Արդարություն և զարգացում կուսակցության թելադրանքով՝ Կրթության նախարարության վերջին կամայականությունն էր՝ հանրակրթական դպրոցներում «Սարը գելին տխրահռչակ տեսասկավառակների տարածումը: Մոտ կես ժամ տևողությամբ տեսաֆիլմը, որը թարգմանաբար նշանակում է «Շիկահեր հարսը», սկսում է համաճարակաբար, որն ունի թե՛ թուրքերեն և թե՛ հայերեն տարբերակները: Ֆիլմում հորինված պատմություններ են թուրքերի նկատմամբ հայերի՝ իբր իրականացրած ցեղասպանության մասին: Փաստավավերագրական հորջորջված տեսաֆիլմը պատվիրվել էր դեռ անցած տարվա հունիսի 25-ին: Կրթության նախարարությունը դպրոցների ղեկավար-

ներին ուղղված հանձնարարականում շեշտել էր, որ մինչև ընթացիկ տարվա փետրվարի 27-ը համապատասխան զեկույց ներկայացնեն նախարարությանը, թե ինչ ազդեցություն է ունեցել ֆիլմն աշակերտների վրա: Հանձնարարականում նշվում է նաև, որ այս պահանջը Թուրքիայի Ձինված ուժերի Գլխավոր շտաբինն է: Պոլսահայերը բողոքի նամակ են հղել վարչապետ Էրդողանին և պահանջել չցուցադրել ֆիլմը հայկական վարժարաններում: Իշխող կուսակցության քայլն արդեն հասցրել է մեծապես բողոքել առաջադեմ մտավորականությանն ու մամուլին, որը նույնությամբ արտատպել է պոլսահայերի նամակը և մեկնաբանել այն:

«Թարիի Վազըֆ ինստիտուտը տեսաժապավենը որակել է զուրկ գիտական բնույթից և քարոզչական նպատակներ հետապնդող ակցիա: «Ֆիլմի ցուցադրումն ավելի է հրահրում հայության դեմ հասարակության առանց այդ էլ մեծ թշնամանքն ու ատելությունը: Այն առաջին հերթին մարդու իրավունքների կոպիտ խախտում է, անդամանելի վերքեր է բացում աշակերտների մոտ և սխալ քայլ է մանկավարժական տեսանկյունից. ասված է «Թարիի Վազըֆ-ի հաղորդագրությունում: «Էվրենսել թերթի իր սյունակում հայտնի գրող Ռազըպ Ջարաթլուն դարձյալ ցավ է հայտնում հայերի նկատմամբ իրականացվող հալածանքների կապակցությամբ: «Սա անընդունելի է: Իշխանությունները շարունակում են նախնիների քաղաքականությունը և ուրանում ցեղասպանության փաստը, -գրել է նա: Ըստ «Պիանեթ կայքէջի՝ Կրթության և գիտության նախարարության աշխատակիցների միության նախագահը պահանջել է իսկույն իրաժարվել ծրագրից, հակառակ դեպքում նրանք դատի կտան գերատեսչությանը: «Ֆիլմը 12 միլիոն երեխաների տվյալներով է՝ ինչպես ասել հայերին ու բոլոր նրանց, ովքեր յուրային չեն, -ասել է նա: Հայտնեն, որ ֆիլմի տարածումն արագ ապահովելու համար իշխող կուսակցությունը գործի է լծել իր երիտասարդական թևի անդամներին, որոնք 75 հազար օրինակ բաժանել են նահանգային դպրոցներին: Թուրք վերլուծաբանները նշում են, որ վերջին շրջանում իշխանությունները մեկ ուրիշ սխալ են թույլ տվել: Կրթության նախարարությունը մեկ այլ թելադրանքով հանձնարարել է տնօրեններին ու աշակերտությանը՝ դասերն սկսելուց առաջ մեկ րոպե լռությամբ հարգել խորաշխարհային ռմբակոծությունների հետևանքով զոհվածների հիշատակը: Լրագրողներն ընդգծել են, որ ինչպես «Սարը գելին» -ը հայերի, այնպես էլ այս քայլը թշնամանք է սերմանում հրեաների նկատմամբ: Մնում է հասկանալ, թե ինչու չի կողմնորոշվում Էրդողանի կառավարությունը, երբ մի կողմից հայտարարում է Հայաստանի ու հայերի հետ հաշտության ցանկության մասին, մյուս կողմից՝ չբացել սահմանը, մինչև պաշտոնական Երևանը զիջումների հիշատակը հարցում: Երգենեթոնի բացահայտման հարցում բանակի գեներալիտետի զայրույթը թաքցնելու պատրվակ է սա, նախընտրական շրջանում ուշադրություն չեղելու, թե՛ ներսում վարած քաղաքականության անպտղաբերության կոծկման միջոց...

Աբրահամ Գասպարյան



Համալսարանական դինաստիաների պատմությունից. գահաժառանգման «պոլիտեխնիկական փորձը

Տարիներ առաջ, մտնելով ԲՈՒՀ, տարօրինակ մի երևույթ նկատեցի. միայն չասեք, թե դուք էլ չեք նկատել... դասախոսների արտաքին նմանությունն ու ազգանունների նույնությունը: Կա մի հասկացություն, որ մարդու աշխատանքն ու կենսաձևը որոշակի ձևով անդրադառնում են նրա արտաքինի վրա, և ինձ թվում էր, որ բացատրությունը դրանում է: Հետագայում՝ արդեն ուսումնառության ընթացքում, պարզեցի, որ այդ նմանությունը գալիս է ոչ թե տարիների ընթացքում դասախոսների վրա իրենց աշխատանքի նույն ֆիզիկական և հոգեբանական անդրադարձից, այլ ազգակցական կապից: Ցայսօր գիտեի, որ գոյություն են ունեցել միայն արքայական դինաստիաներ, որոնք կոչված են եղել կառավարելու պետականությունները և ուղղորդելու դեպի հաղթանակներն ու նվաճումները, սակայն դրանք վերացել են: Բացահայտելով, որ 21-րդ դարում նույնպես գոյություն ունի «դինաստիա հասկացությունը»՝ ինքս ինձ համար հայտնաբերեցի մի նոր երևույթ և այն բնորոշեցի «դասախոսական դինաստիա արտահայտությամբ. այս մարդկանց առաքելությունը ԲՈՒՀ-ական համակարգը կարգավորելն ու որոշ չափով կառավարելն է: Եթե զուգահեռներ անցկացնես, կնկատես այս երկու հասկացությունների միջև նմանությունը. այլ հարց է, թե

որքանով են համապատասխանում ժամանակներին և գործելու ասպարեզին (ԲՈՒՀ): ՀԴՅ-ում հայտնաբերեցի «Հովհաննիսյանների», «Կոտիկյանների», «Կալպակյանների», «Հովսեփյանների», «Միքայելյանների», «Թադևոսյանների» և այլ դինաստիաներ, որոնց թվարկումը շատ ավելի երկարատև ու դժնդակ աշխատանք է, քան արքայատոհմերը թվելը: Այդ պատճառով էլ կբավարարվեմ այսքանով: Դու մի ասա, այս երևույթի արմատները խորն են. ամեն ինչ սկսել է դեռևս 1937թ.-ից՝ այսինքն՝ դեռ այն ժամանակներից, երբ Մեծն Թամանյանի նախագծով կառուցվեց նախկին Պոլիտեխնիկական ինստիտուտի՝ այժմ ճարտարագիտական համալսարանի առաջին մասնաշենքը: Ի դեպ, ինչպես Թամանյանի բոլոր կոթողները, այն նույնպես հոյակերտ է և քաղաքաշինության տեսանկյունից ամբողջությամբ համապատասխանում է մտքի դարբնոց լինելու առաքելությանը: Փորձեմ «Դասախոսական դինաստիան» նկարագրել ներքոնշյալ օրինակով. 1937-ին Պողոս Հովհաննիսյանը բախտի բերմամբ, թե պատահմամբ ընդունվեց աշխատանքի Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես օրգանական քիմիայի դասախոս: Չես կարող ասել, որ մասնագետ էր կամ չէր. մի խոսքով՝ միջին կարգի մասնագետ, որը նաև չէր փայլում իր ընդունակություններով: Պարոն Հովհաննիսյանն ուներ մի որդի, որը, ավարտելով Երևանի հանրակրթական դպրոցներից մեկը, իր հոր բարձր հովանու ներքո ընդունվեց Պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական տեխնոլոգիաների բաժին: Հենց իր հոր աջակցությամբ, չունենալով բավարար գիտելիքներ, ընդունվում է աշխատանքի օրգանական քիմիայի ամբիոն՝ կրկին որպես դասախոս: Մի՞թե հոր թանկագին որդու խմբում չկար ավելի գիտակ, աշխատասեր և խելացի էակ... դե իհարկե՛, կար, բայց մենք մոռանում ենք, որ նա չուներ դասախոս հայրիկ, որը սկիզբ դրեց Հովհաննիսյանների դինաստիային մեր բուհում: Հետո «գահը» հաջորդաբար անցավ հորից որդուն, որդուց՝ հորեղբոր աղջկան, հորեղբոր աղջկանից՝ իր աղջկան և այդպես շարունակ... մինչև մեր օրերը: Այսպիսով, դասախոս լինելը, ազգակցական կապեր չունենալով Հովհաննիսյանների կամ այլ դինաստիաների հետ, դառնում է անհնարին, այնպես որ հույսեր չփայփայեք: Դուք կարող եք հասնել այդ «բարձունքին», միայն եթե նրանց տոհմաժառն ընդհատվի, ինչի հետ կապված հույսերը սին են, ինչպես հասկացաք... միայն նրանց է տրված քիմիայի, ֆիզիկայի, մաթեմատիկայի, լեզվաբանության և այլ ասպարեզներում գիտական աստիճան ստանալու, դասավանդելու, գիտության բարձունքներ նվաճելու շնորհն ու հնարավորությունը... դա նրանց «յուրահատուկ արյան» առավելությունն է: Այնպես որ, թանկագիններս, ձեզ համապատասխան ազգակից է հարկավոր:

Էռնա Ֆոն-Կարայան



Հիմա բանակ տանում են

Վերոնշյալ հարցադրումը վերջերս դարձել է պետական համալսարանի ուսանողների խոսակցությունների ամենամտահոգիչ հարցը: «Ուսանողի Չայն -ը, ստանալով այս հարցի առնչությամբ բազմաթիվ գրավոր և բանավոր դիմումներ, կփորձի պարզաբանել հիմնախնդրի էությունը, քանզի Հայաստանում տարկետման իրավունքով սովորում են շուրջ 30 000 արական սեռի ուսանողներ, ինչով էլ պայմանավորված է հարցի հասարակական մեծ հնչեղությունը:

18 տարեկանից բանակ տանել-չտանելու հարցը վերջին անգամ առաջ քաշվեց ԱԺ-ի աշնանային նստաշրջանում (առանց լայն հասարակական քննարկումների), ինչը, բարեբախտաբար, ետ քաշվեց: Ցավոք սրտի, առաջին իսկ պահից որոշ ուժեր փորձեցին որոշակի քաղաքական շահարկումներ անել՝ անմիտ փաստարկելով, որ 2008 թվականի նախագահական ընտրություններում երիտասարդության որոշ հատվածը չէր պաշտպանում իշխանական ֆավորիտին, և իշխանությունը փորձում է հաշվեհարդար տեսնել իրեն ձայն չտված երիտասարդների հետ: Հարցը շահարկողները գուցե մոռանում են, որ նույն իշխանական երիտասարդները նույնպես, որոնք խորը արմատներ են գցել ուսխորհուրդներում, մեծամասամբ բանակ կգորակոչվեն կամ էլ անպիտանելիության թուղթ (նիգոդնի) ձեռք կբերեն, ինչը միանշանակ իրենց կարիերայի վրա բացասական ազդեցություն կունենա, իսկ մյուս վտանգը, կես լուրջ- կես կատակ, իրենց աղջիկ չտալն է:

Որոշ պետական բուհերում բարձրաստիճան գինվորականների ելույթները հուշում են, որ կատարվեց տմամ իրավունքի վերացման մտադրություն: Այժմ բախվում ենք մի տարօրինակ իրավիճակի, երբ մասնագիտական կրթության և պաշտպանության ինստիտուտները երբեմն ակամայից խնդիրներ են առաջացնում՝ երիտասարդներին իրենց ուղորտ ներգրավելու հարցում: Մինչդեռ շատ կարևոր է, որ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգն իր ներդրումն ունենա երկրի պաշտպանության կուլուրային ամրապնդման գործում՝ ոչ միայն առանձին ռազմական մասնագիտությունների պատրաստման եղանակով (ռազմական բժշկության ֆակուլտետը ԵՊԲՀ-ում), այլև ավելի լայն մաշտաբներով, օրինակ՝ պետական բուհերում ռազմագիտական ամբիոնների ստեղծման և տվյալ մասնագիտության համապատասխան ռազմական մասնագիտությունների ուսուցման ճանապարհով: Այդ դեպքում իրատեսական է թվում նաև շատ մասնագիտու-

թյունների գծով «մասնագիտական ծառայություն սկզբունքի ներդրումը, որը հնարավորություն կտա բարձրագույն կրթության (բակալավրիատը ավարտած) մասնագետներին բանակում ծառայել իրենց կամ հարակից մասնագիտությամբ՝ նպաստելով անձնակազմի ընդհանուր կրթվածության և մասնագիտական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Բացի այդ, նման մեխանիզմը հնարավորություն կտա երիտասարդ մասնագետներին անցնել յուրօրինակ մասնագիտական պրակտիկա, ինչը բուհերում հաճախ պահանջվող մակարդակի վրա չէ:


Բուհական կրթության և երկրի պաշպանության համակարգի ներդաշնակ գործառնությունն ապահովող մեխանիզմների ձևավորման հիմնահարցն առաջիկայում ավելի կկարևորվի, որը պայմանավորված կլինի հանրապետությունում զինապարտության տարիքի երիտասարդների թվաքանակի կրճատման տագնապի փաստով: Ըստ 2001 թ-ի մարդահամարի՝ 1992-1997թթ. և հետագա տարիներին բնակչության ծնելիության անկման և շարունակական արտագաղթի հետևանքով բանակի համալրման խնդիրները շոշափելի կդառնան 2011-2013 թթ.-ին, երբ զինակոչային տարիքի երիտասարդների թիվը 2006թ.-ի ցուցանիշի համեմատ կկրճատվի 20%-ով և դրա հաջորդող տարիներին՝ մինչև 2018-2019թթ., նույն ցուցանիշի համեմատ կնվազի 37-40%-ով, ինչը, անշուշտ, մտահոգիչ է և պարտադրում է ձեռնարկել հրատապ քայլեր:

Բարձրագույն մասնագիտական կրթության և պաշպանության համակարգերի ներդաշնակ գործունեության խնդրի վերաբերյալ առաջարկվում է հետևյալ դեղատոմսը.

- ★ պարտադիր զինծառայությունից տարկետման իրավունքը սահմանել բարձրագույն մասնագիտական կրթության միայն առաջին փուլի՝ բակալավրիատի համար,
- ★ ձևավորել «մասնագիտական ծառայության համակարգ, որը հնարավորություն կտա երիտասարդ մասնագետներին անցնել իրենց մասնագիտությանը համապատասխանող գինվորական ծառայություն, ինչպես նաև որոշակի չափով կբարելավի մագիստրատուրա և ասպիրանտուրա ընդունվողների գիտելիքների մակարդակը:

**Պահպանենք մեր բանակը՝
ի երաշխիք մեր ազգի
անվտանգության**

Սուրեն Պարսյան



Թե ինչպիսի սերունդ է դաստիարակվում դպրոցում և ինչ տեսան պրակտիկանտներն այնտեղ

«Դուք պետք է բարձր պահեք համալսարանի պատիվը, -ասաց ...յանը: ...յանի ճառի՝ ահա այս պաթետիկ տոնով արտասանված և զուցե մի փոքր էլ կեղծ հնչերանգ արտահայտող վերջաբանը ստիպեց մեզ՝ պրակտիկանտ-ուսանողներին, մի կողմ նետել ուսանող կոչմանն անվայել կեցվածքը, ժարգոնային արտահայտություններն ու ծանոնները և հարգանք ներշնչող քայլվածքով մտնել դպրոց: Հաստատություն, որտեղ մեկ ամիս շարունակ որպես ուսուցիչ պետք է անցկացնեինք մեր պրակտիկան: Ստանք դպրոց: Կարոտով նայելով պատերին՝ մեզանից յուրաքանչյուրը հիշեց իր աշակերտական կյանքից չարաճճի ու քաղցր մի պահ: Եվ լավ ու սիրելի ուսուցիչ դառնալու սրբազան որոշումն ամուր պահած՝ տնօրենի հարմարավետ սենյակում լսեցինք նրա հերթական հուզիչ ճառը՝ դպրոցի երեխաների արտակարգ ընդունակությունների (երանի թե), օրինակելի կարգապահության (ստեց անամոքաբար) մասին և դասացուցակը գրպաններումս՝ գնացինք դասարան: Ահա այս արարողակարգը նախորդում է պրակտիկայի գնացող յուրաքանչյուր ուսանողի, սակայն բոլորովին հիասթափեցնող է այն, ինչ հաջորդում է դրան...

Լավագույն որոշումները սրտումս՝ մտա դասարան, որտեղ ինձ դիմավորեցին ավելի քան անկարգապահ աշակերտների խումբը ու լարված ժպիտով ուսուցիչը, ով երեխաներին ներկայացնելուց հետո հանկարծ շեշտակի շրջվեց և ուժգին ապտակեց մի հաստիկ աշակերտի, երբ վերջինս համարձակվեց ընդհատել նրան: Աշակերտն ամենազարմանալի անդրեսությունը ժպտաց իր ընկերներին և վայելեց նրանց ծիծաղը, իսկ ուսուցիչն ամենազարմանալի աննրբանկատությամբ սկսեց լսելի ձայնով պատմել ինձ տիպիկ մանրամասներ ապտակ ստացած երեխայի ընտանեկան կյանքից: Իսկ այդ պահին մի նորաձև հագնված աշակերտուհի շշմեաց մեկ ուրիշի թանկարժեք ականջօղերով ծանրաբեռնված ականջին: «Ես պառավը ոնց էլ մի օր չի մեռնում: Սա մի փոքրիկ դրվագ էր պրակտիկանտներին առօրյայից, որի տրամաբանական շարունակությունն են կազմում մնացած բոլոր դրվագները՝ լեցուն անհարգալից վերաբերմունքով, լկտիությամբ ու գիտելիքների հսկայական պակասով: Հավաստի փաստեր ձեռք բերելով այն մասին, որ նման վիճակ առկա է գրեթե բոլոր դրոցներում՝ եզրահանգեցինք, որ եթե այս հարցին շուտափույթ լուծում չտրվի, ապա մեզ սպասվում է սարսափելի ապագա, որի տերերը՝ երիտասարդները, լինելու են արժեքային համակարգից զուրկ, աներես ու բթացած խղճով



մարդիկ: Այդ վիճակի համար պատասխանատու կլինեն թե՛ ձեռքերը ծեծի սովորեցրած ու ծվատված նյարդային համակարգով ուսուցիչները, թե՛ բռնազբոսիկ ժպիտով կաշառակեր տնօրենները, թե՛ նրանց կաշառակերությանը հագուրդ տվող և դրանով իսկ իրենց երեխաների հոգիներն անարատությունից զրկող ծնողները և թե՛ գլխավորապես նրանք, որոնք կոչված են այս քառսի մեջ կարգապահություն մտցնելու: Այս ամենը խոստովանելու անկեղծությունը, կարծես, լքել է բոլորին, և այդ լքված անկեղծությունն էլ վերջերս, փառք Աստծո, սողոսկել է ուսանողների շարքեր: Այս օրերին դպրոցների մոտ հաճախ կարելի է տեսնել մտահոգված դեմքերով պրակտիկանտների, որոնք վիճաբանում են, մտորում կամ ոգևորված ու նոր գործ սկսելու եռանդով՝ ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իրենց մեթոդներն են առաջարկում: Կարող ենք միայն հուսալ, որ Հայաստան «Ժամանած» ուսուցման նոր մեթոդներն ու ծրագրերը, ի վերջո, լուծում կտան այս գերխնդիրին...

Դժբախտ պրակտիկանտ

Սփյուռքահայ երիտասարդները կգան հայրենիք և կբնակվեն տեղի ընտանիքներում

Սփյուռքի նախարարության՝ «Արի տուն ծրագրի առաջին փուլի մեկնարկն արդեն տրված է, և թաղապետարաններում արդեն սկսել է հյուրընկալող ընտանիքների գրանցումը: «Արի տուն»-ը ծրագիր է, որի շրջանակում 15-25 տարեկան սփյուռքահայ պատանիներն ու երիտասարդներն այցելելու են հայրենիք և բնակվելու են տեղի ընտանիքներում: Ծրագրում, երևանից բացի, ներգրավվելու են նաև հարակից՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը: Ընտանիքների ընտրությունը կատարվելու է թաղապետարանների ու մարզպետարանների միջոցով: Ընտրված ընտանիքները, սակայն, հյուրընկալության համար չեն փոխհատուցվելու: Ծրագրի տևողությունը 2-3 շաբաթ է: «Մենք թաղապետարաններին խորհուրդ ենք տվել կապ պահել դպրոցների հետ, քանի որ այդ ճանապարհով հնարավոր է ավելի շատ տեղեկություններ ստանալ դիմող ընտանիքի մասին, -ասում է Սփյուռքի նախարարության համահայկական ծրագրերի վարչության պետ Ժենյա Ազիզյանը

Կրթության և գիտության, Սպորտի և երիտասարդության նախարարությունները, քանի որ ծրագրի հիմնական նպատակը երիտասարդներին Հայաստանին, նրա պատմամշակութային արժեքներին ծանոթացնելն է: «Ծրագրի շրջանակներում պետք է այցելություններ լինեն նաև դպրոցներ, որտեղ անպայման կանցկացվեն հայոց լեզվի ու պատմության դասեր, -ասում է Ժենյա Ազիզյանը:

Անահիտը ընդամենը մի քանի օր առաջ է լսել «Արի տուն ծրագրի մասին, սակայն արդեն հասցրել է ոգևորվել: «Թեև դեռ ամեն ինչ չգիտեմ այս ծրագրի մասին, չգիտեմ, թե ինչպես պիտի դիմեմ, ինչ պայմաններ պիտի ապահովենք, սակայն իրոք շատ կուզենայի իմ սփյուռքահայ հասակակիցներից մեկին հյուրընկալել մեր տանը: Կարծում եմ, որ այս ծրագիրը հնարավորություն կտա լավ հարաբերություններ հաստատել երիտասարդների միջև, իսկ անձամբ ինձ կօգնի սփյուռքահայ ընկերներ ծեռք բերել, - ասում է նա:



Սփյուռքահայ երիտասարդները պետք է Հայաստան գան սեփական միջոցներով կամ գտնեն հովանավորներ: Ժենյա Ազիզյանի հավաստմամբ՝ ծրագիրն աջակիցներ ունի ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում, և որոշ կազմակերպություններ արդեն խոստացել են օժանդակել երիտասարդների հայրենիք գալուին:

Հյուրընկալող ընտանիքը պետք է լինի բարեկեցիկ և ունենա նորմալ կենցաղային պայմաններ, որպեսզի հայրենիք եկող երիտասարդը ստիպված չլինի զբաղվել կենցաղային մանր խնդիրներով և Հայաստանից չհեռանա այդպիսի տպավորություններով: «Սակայն եթե ընտանիքն առանց փոխհատուցման համաձայնում է ևս մեկ հոգու ծախս վերցնել իր ուսերին, ինքնին նշանակում է, որ դրա հնարավորությունն ունի, -ասում է Ժենյա Ազիզյանը:

Ծրագրի հետ համագործակցելու են նաև Մշակույթի,


Նախապատվությունը տրվելու է այն ընտանիքներին, որտեղ կա նույն տարիքի և սեռի անդամ: «Այսպիսով, նրանք չփման եզրեր կունենան, և սփյուռքահայ երիտասարդը չի ծանձրանա, -ասում է համահայկական ծրագրերի վարչության պետը: Վերջինիս հավաստմամբ՝ ծրագիրն արդեն հետաքրքրություն է առաջացրել, հայտեր արդեն կան, իսկ թաղապետարաններից իրենց հաճախ են զանգում ու հարցեր տալիս:

Ծրագրի կազմակերպիչները հույս ունեն, որ յուրաքանչյուր երեխա իր հետ մի կաթիլ Հայաստան կտանի արտերկիր՝ անպայման վերադառնալու ակնկալիքով:

Մարիա Կարաթորոսյան

Ստրկացուցիչ պայմաններ՝ Թեղուտում գործազուրկ չմնալու համար

Թեև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ժամանակավորապես դադարեցրեց Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման աշխատանքները, այնուամենայնիվ կան մի շարք հանգամանքներ, որոնք մտահոգում են տեղի բնակչությանը: Երբ «Արմենիան Քափըր Փրոգրամ» (ACP) ընկերությունն սկսեց Լոռու մարզի Թեղուտ գյուղի հանքավայրի շահագործման նախապատրաստական աշխատանքները, բնակիչներն անգամ պատկերացում չուներին տարածքին հասցվելիք բնապահպանական վնասների մասին: Հանքավայրում աշխատանքներ սկսելու համար ընկերությանն անհրաժեշտ էր ձեռք բերել այն հողատարածքները, որոնք պատկանում էին թեղուտցիներին: Չարաշահելով թեղուտցիների գործազրկության հանգամանքը՝ ընկերությունն աշխատանքի ընդունեց այն մարդկանց, որոնք իրենց հողամասերը չնչին գնով (1000 քմ-ը ընդամենը 200 դոլարով) վաճառեցին ընկերությանը: Իսկ մինչ այդ աշխատավորներից պահանջեցին կամ իրենց հողամասը վաճառել ընկերությանը, կամ մնալ առանց աշխատանքի: Դժգոհության մեծ առիթ է հանդիսացել նաև այն հանգամանքը, որ ժամանակից շուտ հատվում է Թեղուտի անտառը՝ կարևոր շինարարական կառույցների տեղ հատկացնելու պատրվակով: Հատված անտառների հետևանքով գյուղացին գրկվում է պտղատու ծառերի բարիքներից (հոն, մասուր, զկեռ, սարի տանձ, մոշ և այլն):



Թեղուտցին չի կարողանում փայտ բերել տուն, քանի որ հատված ծառերից գոյացած այն մասը, որը պիտանի է վաճառելու, վաճառում է Շնողի անտառտնտեսությունը, իսկ այն մասը, որը պիտանի է վաճառքի, լցնում են հողի տակ՝ հետքերը վերացնելու նպատակով, որպեսզի ստուգումների ժամանակ հաստատեն, որ այդտեղ ծառեր չեն եղել: Մինչդեռ այն մասը, որը պիտանի է վաճառքի և լցվում է հողի տակ, գյուղացին կարող է օգտագործել որպես վառելափայտ:

Թեղուտցի ուսանող

Մի կուրսի պարտություն

Բուհը՝ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ
Ֆակուլտետը՝ Ֆիզմաթ
Կուրսը՝ ֆիզիկա 4



Կուրսում սովորում են 21 ակտիվ ուսանողներ: Ընթացիկ ուսումնական տարվա 1 կիսամյակի տվյալների համաձայն՝ կուրսում կա 8 գերազանցիկ: Պարբերաբար մասնակցում են ֆակուլտետային ՈւԳԸ-ին և բազմիցս արժանացել են պատվոգրերի, մրցանակների և դրամական խրախուսանքների: Պարբերաբար այցելում են քաղաքի մանկատուն, ծերանոց, կազմակերպում են հիշատակի ցերեկույթներ՝ նվիրված հայ մեծ գիտնականների ու ազատամարտիկների հորեյաններին: Նրանց մասին դրվատանքով են խոսում գրեթե բոլոր դասախոսներն ու ինստիտուտի ղեկավարությունը: Ուսանողները խոստովանում են, որ թեև այս տարի ավարտում են բուհը, բայց և շատ չեն տխրում, որովհետև անցած 4 տարիները իմաստավորված են անցկացրել:

Վանաձորից՝ Հակոբ Փափազյան

Հայկական շարունակականություն-1 Պետրոս Ղևոնդյան (Պետո)



Փետրվարի 14-ին լրացավ Շուշիի առանձնակի գումարտակի փոխհրամանատար, Արցախյան ազատագրական շարժման ակնառու գործիչ Պետրոս Ղևոնդյանի նահատակության 15-րդ տարելիցը: Ամեն տարի, ըստ ավանդույթի, նրա մարտական ընկերներն ու զաղափարակիցները հավաքվում են Պռոշյանի պանթեոնում, որտեղ հանգչում են ավանի յոթ ազատամարտիկները: Պետոն ծնվել է 1964 թ-ին, Պռոշյանում: Մասնակցել է Շահումյանի, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի շրջանների ազատագրման մարտերին: Հորադիզից մինչև Մեծ Մռավի վերագրավում՝ փառքի ճամփա անցած



հրամանատարը «Մարտական խաչ առաջին աստիճանի շքանշանի ասպետ է և «Արցախի հերոս»: Պետոն զոհվեց Օմարի լեռնանցքն ազատագրելուց հետո, երբ նոր էր լրացել նրա 30 տարին:

Հայկական շարունակականություն-2 Արթուր Մկրտչյան



Փետրվարին նաև լրացավ ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ, պետության առաջին ղեկավար Արթուր Մկրտչյանի 50-ամյակը: Բարեբախտություն է, երբ երկրի ու ժողովրդի համար ծանրագույն պահին պատասխանատվությունն իրենց վրա են վերցնում նվիրյալները, որոնք որևէ այլ բանի մասին չեն մտածում, քան միայն սեփական երկրի ու ժողովրդի: Մարդիկ, որոնց չես կարող շեղել ճշմարիտ ճանապարհից ոչ փառքի, ոչ հարստության, ոչ էլ այլ գալթակություններով: Եվ միայն նման մարդկանց առկայության դեպքում է, որ հնարավոր է հասնել հաղթանակների: Այդպիսին է Արթուր Մկրտչյանը, որն իր կյանքը նվիրեց Ղարաբաղի ու Հայաստանի ազատությանն ու անկախությանը: Խոնարհվում ենք Արթուր Մկրտչյանի հիշատակին:

Ուսանողությունը հայրենասեր է նաև «Վարդանանք միության գործունեության շնորհիվ

Արդեն երկար տարիներ է, ինչ էՊՀ-ի «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբը, չնայած բոլոր դժվարություններին ու խոչընդոտներին, հեռու մնալով քաղաքական բևեռացումներից, բուռն, հետաքրքիր և հանրօգուտ գործունեություն է ծավալում համալսարանում՝ օր օրի ներգրավելով նորանոր ուսանողներ: «Ուսանողի ծայնը չէր կարող անտարբեր մնալ և չանդրադառնալ այս ակումբի գործունեությանը: Մենք փորձեցինք ակումբի տնօրեն Սաթենիկ Աբրահամյանից հետաքրքիր տեղեկություններ ստանալ իր ղեկավարած հաստատության մասին: «Վարդանանք»-ը զոհված ազատամարտիկների հիշատակի ակումբ է: Այնտեղ ներգրավված են





համալսարանում ուսումնառող հայրենասեր երիտասարդներ, ինչպես նաև զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամներ: «Վարդանանքի ուշադրության արժանի ծրագրերից են պարբերաբար անցկացվող հուշ-ցերեկույթները, որոնց ընթացքում երիտասարդները ներկայացնում են այս կամ այն զոհված ազատամարտիկի կյանքի ու հերոսության դրվագներ՝ դրանով իսկ հարգանքի տուրք մատուցելով արյան գնով մեզ հասած ժառանգությանը: Հիշարժան ծրագրերից է նաև հերոսների նահատակության կամ ծննդյան օրերին եռաբլուր կատարվող հաճախակի այցելությունները: Մեկ այլ ծրագիր է՝ «Դասը վարում են համալսարանականները», որի շրջանակում վերջիններս այցելում են դպրոցներ և աշակերտների հետ անցկացնում դասեր, ընթերցումներ, որոնց շնորհիվ «Վարդանանքիների» էությունը լցվում է պոեզիայով: Եվ, իհարկե, զոհված ազատամարտիկների անուններով լսարանների բացումը, որն առավել վառ է պահում նրանց հիշատակը: Ըստ տիկին Սաթենիկի՝ այդ լսարանների շնորհիվ մեր հերոսների ոգին, կարծես, վերադարձած լինի համալսարան: Այս ընթացքում համալսարանում բացվել է 17 լսարան և անցկացվել 17 բաց դաս: Մինչև 2009 թվականի վերջը նախատեսվում է ևս մի քանի լսարանի բացում: Ինչևէ, նրանց բեղմնավոր ու շարունակական գործունեությունը մաղթենք:

Նատալյա Ծատուրյան

Սերգեյ Փարաջանով 90-ամյակ


Ս. Փարաջանովը հայ ազգի հանճարներից է, ով մեծ գնահատանքի է արժանացել միջազգային հարթակներում՝ որպես կինոռեժիսոր արժանանալով բազմաթիվ պարգևների և մրցանակների: Նա ստեղծագործել է խորհրդային խավար տարիներին՝ այն ժամանակ, երբ հալածվում էին բոլոր ազատամիտները, որոնք կարող էին կասկածի տակ դնել Կենտրոնից թելադրվող մշակույթը կամ գաղափարախոսությունը: Շատերի նման Փարաջանովը ևս բանտարկվեց՝ 2 ամսամյա: Փարաջանովն իր ալեբեկ կյանքի ընթացքում նկարահանեց 4 ֆիլմ, սակայն դա նրա համճարի գագաթնակետը չէր: Նա նախանձ մարդ չէր, սակայն մի անգամ անկեղծ խոստովանել է. «Նախանձում են այն կինոռեժիսորներին, ովքեր նկարահանել են իրենց գրած բոլոր կինոսցենարները: Այս խոսքերը լոկ խոսքեր չեն, քանզի Փարաջանովը հեղինակել էր 20-ից



ավելի բեմագրություններ, որոնք, ավա՜ղ, թղթի վրա են մնացել: Պատճառն այն էր, որ նա, լինելով ազատամիտ մարդ, ապրում և ստեղծագործում էր անազատ երկրում: Փարաջանով հանճարը, բացի կինոռեժիսոր լինելուց, նաև մեծ արվեստագետ էր: Նրա տուն-թանգարանում կարելի է ականտես լինել բազմաթիվ կավից, երկաթից և այլնից պատրաստված նկարների, կոմպոզիցիաների և իրերի, որոնք պատրաստվել են ինչպես բանտային, այնպես էլ անազատ ազատության տարիների ընթացքում:

Սուրեն Պարսյան

ՕԴՈՔԼԱՍՏՈՒՈՒՄ-ամանյա. Ծրագրավորողները կոտրեցին օդնոկլասսնիկի.ռու («odnoklassniki.ru») կայքը



Նախորդ համարում ներկայացրել էինք ինտերնետամուլության, մասնավորապես՝ օդնոկլասսնիկամանիայի ու նրանից բխող հետևանքների մասին: Սակայն քչերը գիտեն, որ հայտնի ու մեծ վարկանիշ ունեցող օդնոկլասսնիկի կայքը վերջերս ծրագրավորողների զոհ է դառնել: Փորձառու ծրագրավորողները ոչ միայն ֆինանսական անհանգստություն են պատճառել կայքի տնօրինությանը՝ կոտրելով կայքը, այլև պարզապես չար կատակ են խաղացել կայքի ակտիվ սպառողների հետ: Առաջին անգամ հարձակումը նկատվեց, երբ շուրջ մի քանի տասնյակ հազար անհատական էջեր վարակվեցին անհասկանալի վիրուսով, կային նաև այնպիսի դեպքեր, երբ ծրագրավորողները, կոտրելով այս կամ այն մարդու անհատական էջը, հայտնի են նույն մարդու ընկերներին կամ պարզապես կայքից ջնջել են անհատական էջը: Պարզվում է, որ Հայաստանում նույնպես գտնվեցին մարդիկ, որոնք ծրագրավորողների զոհ են դարձել: Տուժածներից շատերը պահանջեցին կայքի տնօրինությանը պարզաբանում տալ ստեղծված իրավիճակի վերաբերյալ, սակայն կամ տնօրինությունն ի զորու չեղավ ինչ-որ բան ձեռնարկել, կամ էլ անտեսեց բոլոր հորդորներն ու պահանջները: Ինչևէ, անկախ

ամեն ինչից, կայքը գերծ չմնաց նաև մի շարք «երեսայական խուլիգանություններից»: Դրանցից մեկի մասին մեզ պատմեց Մանե Սիրականյանը: Նրա խոսքով՝ համակուրսեցին կայքերից մեկում պատահաբար տեսել էր Մանեի լուսանկարները, որոնք վերջինս տեղադրել էր օդնոկլասսնիկի.ռու կայքում: Սակայն այնտեղ կեղծված էր աղջկա տվյալները՝ անունը, տարիքը, հեռախոսահամարը: Դատեք ինքներդ, նմանօրինակ ցածրորակ «կատակներից» ոչ ոք ապահովագրված չէ. միայն մնում է նմանատիպ կայքում ձեր մասին ցանկացած տեղեկություն տեղադրելուց առաջ մտածել, որ հետագայում այդ քայլը չօգտագործվի ձեր իսկ դեմ ու չտոնահարվեն ձեր իրավունքները:


Լիլիթ Լալայան



ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13 մետր երկարություն, 1140 կգ քաշ

Այսպիսի տվյալներով հայտնաբերվել է հսկա օձ, որը սնվել է կոկորդիլոսներով, մեծ ձկներով և ծովային կրիաներով: Հսկայի մնացորդները հայտնաբերվել են վերջերս: Այն անվանվել է Տիտանոբոա, որն ապրել է 58-60 միլիոն տարի առաջ: Մինչև այժմ մասնագետներին հայտնի ամենամեծ օձը Գիգանտոֆիսն էր, որն ապրել է Եգիպտոսում 39 միլիոն տարի առաջ և ունեցել է 10 մետր երկարություն: Ներկայումս այդ տիտոբոան է կրում 9 մետր երկարությամբ ցանցավոր վիշապ օձը:



Որքա՞ն արժե մերկ Մադոննան

Նյու Յորքի հայտնի «Քրիսթիի աճուրդի տան մասնագետները փոփ թագուհու մերկ լուսանկարը նախնական գնահատել են 15 հազար դոլար: Սակայն Մադոննան աճուրդի հանված միակ սեքս-սիմվոլը չէ: Այստեղ է նաև 1962 թվականին «Վոգ» ամսագրի պատրաստած՝ Մերիլին Մոնրոյի վերջին ֆոտոշարքը և տասնյակ այլ հայտնի մարդկանց անհայտ լուսանկարներ: Աճուրդի տան մասնագետները հավաքածուի վաճառքից անկնկալում են ստանալ մինչև 1 միլիոն 700 հազար դոլարի շահույթ:



Կանայք շատ են ու ավելի երկարակյաց

Հայաստանում կանայք տղամարդկանցից մոտ 6 տարով ավելի երկար են ապրում: Մեր երկրում կյանքի միջին տևողությունը 73 ու կես տարի է: Կանայք ապրում են միջինը մոտ 76 տարի, տղամարդիկ՝ 70: Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ վերջին 3 տարիներին կանանց թիվը հանրապետությունում չարունակում է գերակշռել տղամարդկանց թվին, իսկ այս տարեսկզբի դրությամբ այն գերազանցում է շուրջ 100 հազարով:



17 տարի անընդմեջ՝ կոմայի մեջ

Իտալիայի մասնավոր կլինիկաներից մեկում «մահացվել է 38-ամյա Էլուանա Էնզլարոն, որը 17 տարի շարունակ կոմայի մեջ էր: Փետրվարի 6-ին Իտալիայի Գերագույն դատարանի որոշմամբ՝ բժիշկներն անջատել են արհեստական սնուցման սարքը: Էֆտանագիայի այս դեպքն Իտալիայի հասարակության երկփեղկվածության պատճառ է հանդիսացել: «Մահվան իրավունքի հարցը սեպ է խրել նաև երկրի վարչապետի և նախագահի հարաբերություններում և այժմ սպառնում է սահմանադրական ճգնաժամի պատճառ դառնալ:




Պահպանվե՞լ են Պուշկինի արյան հետքերը

Սանկտ Պետերբուրգում Պուշկինի անվան տուն-թանգարանի աշխատակիցներն անհավատալի բացահայտում են արել: Արյան հետքերը, որոնք նկատվել են բազմոցի վրա, հավանաբար, թողել է բանաստեղծն իր մահվան օրը: Թանգարանի աշխատակիցները դեռևս չեն բացահայտում մանրամասները, սակայն մասնագետները պատրաստվում են գիտական նիստի, որը կարող է նոր սենսացիա դառնալ: Տուն-թանգարանի ղեկավար Գալինա Սեդովան երկար ժամանակ գլուխ է կոտրել, թե ինչու է «Երմիտաժը» նվիրել այդ բազմոցը թանգարանին 1937 թ-ին: Մինչ այդ բազմոցը պատկանել է ֆիլոսոֆուների ընտանիքին:



«Վստահեցի շատերին՝ գաղտնիքս առան ու տարան...




Ընկերն այն մարդն է, ում հետ մտերիմ ես, ու, կարծես, նա քո երկրորդ ես-ը լինի, որ օգնում է քեզ ավելի լավ հասկանալ սեփական անձը: Ընկերներ լինել նշանակում է միասին երազել, ուրախանալ, դժվարություններ հաղթահարել, կյանքի ամեն պահին միասին լինել և որ ամենակարևորն է՝ միասին մեծանալ: Տղայի և աղջկա միջև ընկերություն հանդիպում է թե՛ երիտասարդների և թե՛ մեծահասակների մոտ: Հնարավոր է արդյոք ընկերություն աղջկա և տղայի միջև... հանդիպեցի Դավիթ Աղաջանյանին, ով մասնագիտությամբ հոգեբան է: «Նայելով հարցի բոլոր կողմերը՝ կարող եմ միանշանակ ասել, որ ընկերություն ասվածը տարբեր մարդկանց մոտ տարբեր է, ամեն մարդ չէ, որ կարող է հակառակ սեռի հետ անկեղծանալ, ազատ խոսել առկա խնդիրների մասին, սակայն կան մարդիկ, որոնց համար դա խնդիր չէ: Նրանք

առանց բարոյությունների անկեղծանում են հակառակ սեռի հետ և խնդիրներին նայում երկու կողմից: Այդ շփումները շատ օգտակար են: Իսկ նրանց, ովքեր կոմպլեքսավորվում են հակառակ սեռի հետ ընկերական շփումից, կարող եմ ասել՝ պետք չէ կյանքի մի կողմը տեսնել, - պարզաբանեց նա: Պետք է նշել, որ տղայի և աղջկա հարաբերությունները հաճախ տատանվում են ընկերության և սիրո միջև: Փորձեցի մի քանի երիտասարդներից ճշտել, թե արդյո՞ք ընդունում են փաստը, որ աղջկա և տղայի միջև կարող է լինել զուտ ընկերություն. ահա և մի քանի կարծիք.

Արսեն Օհանյան. «Կարծում եմ՝ հնարավոր չէ: Չեմ կարող աղջկան ընդունել որպես իմ ընկերոջ, քանի որ նա ուրիշ կերպ է մտածում. եթե նա իմ սիրած էակը չէ, ապա նրան չեմ վստահի գաղտնիքներս: Ձիճառաշող Արտաշ Ալեքսանյան. «Աղջիկ ընկերներն ունեն, լավ հասկանում եմ իրենց, իրենք էլ՝ ինձ, շատ խորհուրդներ են տալիս... ինձ օգնում են հասկանալ կանացի հոգեբանությունը...»: Իսկ Աննա Ս.-ն ինձ զարմացրեց իր պատասխանով. «Ունեցել եմ տղա ընկեր, խորհուրդ եմ հարցրել, միշտ կիսվել եմ, նա ամեն բան իմացել է իմ անձնականի մասին: Մի օր նկատեցի, որ այն, ինչ պատմում եմ իրեն, գիտեն մեր կուրսի բոլոր տղաները: Շատ վատ զգացի: Այլևս տղաներին չեմ վստահում:

Կարծիքները բազմազան են ու բազմաթիվ. ինչքան մարդ՝ այնքան էլ կարծիք: Ոմանք մոր շփումներ են փնտրում հակառակ սեռի հետ: Դրանք լինում են ժամանակավոր, իրասթափեմնող կամ էլ ամբողջ կյանքի համար: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ մարդ ավելի վստահ է զգում իրեն հակառակ սեռի ներկայությամբ:

Անուշ Լալայան



ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹԵՍՏ

ԻՆՉ ԿԵՆԴԱՆԻ ԵՍ ՀԻՇԵՅՆՈՒՄ ՍԻՐՈ ՀԱՐՅՈՒՄ

1. Ի՞նչ է սերը.

- ա) հարգանք՝ միմյանց ազատության հանդեպ
- բ) գրավիչ արկած
- գ) երբ սիրելիիդ մասին ամեն ինչ գիտես
- դ) երբ սիրելիդ քո կողքին է
- ե) ցավ ու տառապանք

2. Եթե ընկերդ վատ տրամադրություն ունի.

- ա) ամեն կերպ կփորձես մխիթարել նրան
- բ) կհասկանաս ու հանգիստ կթողնես նրան. դու ևս տրամադրության մարդ ես
- գ) քո տրամադրությունն էլ կփչանա
- դ) դու կսկսես վախենալ ու անհանգստանալ
- ե) կզնաս ընկերուհիներիդ հետ զվարճանալու, իսկ նա թող հանգստանա

3. Երբ դուք տեսասկավառակների խանութում եք.

- ա) մի ֆիլմը դու ես ընտրում, մյուսը՝ ընկերդ
- բ) դու ուրախանում ես, երբ դուք ընտրում եք միևնույն ֆիլմը
- գ) դու գերադասում ես չվիճել նրա հետ, թեև հավանություն չես տալիս նրա ընտրած ֆիլմերին
- դ) դուք անընդհատ վիճում եք, որովհետև տարբեր ճաշակներ ունեք
- ե) ֆիլմերը սովորաբար ընկերդ է ընտրում

4. Երբ ընկերոջդ հետ կինոթատրոն ես գնում.

- ա) դիտում ես ֆիլմը
- բ) հուսով ես՝ ֆիլմը նրան դուր կգա, քանի որ այն դու ես ընտրել
- գ) սեղմվում ես նրան, երբ սարսափելի տեսարաններ են ցույց տալիս
- դ) անընդհատ բռնում ես նրա ձեռքը
- ե) երբեմն լարվում ես, իսկ երբեմն քեզ դուր է գալիս, որ նա ուզում է գրկել քեզ

5. Ի՞նչ նվեր կցանկանայիր ստանալ նրանից.

- ա) մատանի
- բ) սիրո չափածո խոստովանություն
- գ) համատեղ թռիչք օդապարիկով
- դ) ֆիտնես ակումբի տոմս
- ե) քեզ նվեր պետք չէ. քեզ պետք է, որ նա լինի քո կողքին

6. Եթե տեսնես, որ ընկերդ գրկախառնվում է ուրիշ աղջկա հետ.

- ա) կհուզվես ու կմտածես՝ ինչ անել
- բ) անմիջապես կբաժանվես նրանից
- գ) նրան կարատի մի քանի հնարք ցույց կտաս
- դ) կներես, բայց այսուհետև կհետևես նրան
- ե) կներես նրան, որովհետև վախենում ես նրան կորցնել

7. Ի՞նչ կմտածես, եթե ընկերդ ասի, որ երեկոյան չեք հանդիպելու.

- ա) «Ինչպե՞ս փչացնեմ նրա տրամադրությունը
- բ) «Համոզեմ նրան հանդիպել գոնե կես ժամով
- գ) «Ափսո՛ւ, ես այսօր ռոմանտիկ երեկոյի էի տրամադրված
- դ) «Հետո՞ ինչ... ես էլ ժամանակ չունեմ
- ե) «Իսկ ե՞ս ինչ անեմ երեկոյան

8. Դու պայմանավորվել ես ճաշել ընկերուհուդ հետ, բայց զանգահարում է ընկերդ ու առաջարկում հանդիպել: Ի՞նչ կանես.

- ա) կհրաժարվես. դու այլ ծրագրեր ունես
- բ) դու կցանկանայիր նրան տեսնել, բայց չես կարող անհարմար դրության մեջ գցել ընկերուհուդ
- գ) կհրաժարվես ընկերուհուդ հետ հանդիպելուց
- դ) կշփոթվես՝ չիմանալով՝ ինչ անել
- ե) քեզ հետ այդպիսի բան չի կարող պատահել. դու միշտ հետաքրքրվում ես ընկերոջդ ծրագրերով

9. Ինչպիսի՞ն են ընկերուհիներիդ հարաբերություններն իրենց ընկերների հետ.

- ա) տարօրինակ. չես էլ նկատի, որ նրանք միասին են
- բ) նրանք ձգտում են նմանվել իրենց ընկերներին
- գ) ծանծրալի. նրանք միմյանց անգիր գիտեն
- դ) ցանկացած դեպքում ընկերուհիներդ քեզնից համարձակ են
- ե) նրանք միմյանց ցավ են պատճառում

10. Ի՞նչ են հիշեցնում քո ու ընկերոջդ հարաբերությունները.

- ա) սիրո բեմ՝ զարդարված ծաղիկներով ու մոմերով
- բ) ոսկե թել
- գ) երկար, էլաստիկ խողովակ
- դ) սիրո ու վստահության ցանց
- ե) առանձնապես ոչ մի բան

11. Եթե քո ցանկությամբ լինեիր.

- ա) նա քեզ հետ բարեհամբույր կլինեիր
- բ) դուք միասին կանցկացնեիք յուրաքանչյուր վայրկյանը
- գ) դու նրան երբեք բաց չէիր թողնի
- դ) նա կհասկանար՝ դու երբ ես ուզում մենակ լինել
- ե) խիղճդ չէր տանջի, որ նրա համար ժամանակ չես ունենում

12. Հետևյալ պնդումներից որի՞ն հետ ես համաձայն.

- ա) նա միշտ կարող է ինձ վրա հույս դնել
- բ) առանց նրա կյանքս իմաստ չունի
- գ) նա մեծ տեղ ունի իմ սրտում
- դ) հուսով եմ՝ նա ինձ երբեք ցավ չի պատճառի
- ե) հուսով եմ՝ նա ինձ չի ծանծրացնի

Այժմ ամփոփենք արդյունքները

	ա)	բ)	գ)	դ)	ե)
1.	4	2	1	0	3
2.	1	2	0	3	4
3.	2	1	3	4	0
4.	4	0	3	1	2
5.	0	3	4	2	1
6.	3	4	2	1	0
7.	3	1	2	4	0
8.	2	4	0	3	1
9.	1	4	2	0	3
10.	0	3	4	1	2
11.	3	0	1	2	4
12.	2	0	4	3	1



0 - 9 միավոր: ՀԱՎԱՏԱՐԻՄ ՇՆԻԿ: Քեզնից նվիրված ընկերուհի հնարավոր չէ գտնել: Միայն ընկերդ ակնարկի, ու դու կընթանաս նրա մոտ՝ թողնելով գործերդ: Դու հարմարվում ես նրա ցանկություններին, որովհետև երջանիկ ես, երբ նա է երջանիկ: Ատամների ցույց ես տալիս, միայն երբ նրան մոտենում եմ այլ աղջիկներ: Աշխատիր ավելի ինքնուրույն լինել:

10 - 18 միավոր: ԼՈՐՏՈՒ: Քեզ շատ պասիվ ես պահում, քանի դեռ չես ծանոթացել որևէ տղայի հետ: Մինչ նա հաճոյախոսություններ է շռայլում քո հասցեին, դու ուշադիր զննում ես նրան: Բայց հենց հասկանում ես, որ տղան նա է, ում փնտրել ես, անմիջապես փաթաթվում ես նրան ու բաց չես թողնում: Դու նվիրված ես, բայց երբեմն լինում ես կաշուն: Տղան քո կողքին իրեն զոհ կզգա ու կփորձի ազատվել:

19 - 28 միավոր: ԲՄԱՀԱՆ ՓԻՍԻԿ: Դու անկանխատեսելի ես: Ընկերդ հազվադեպ է կռահում, թե ինչ կանես հաջորդ վայրկյանին: Երբեմն անհասանելի ես, երբեմն՝ չափազանց քնքուշ: Եթե տղան խախտում է քո անհատականության սահմանները, ցցում ես ճանկերդ:

29 - 38 միավոր: ՔՆՔՈՒՇ ԵՂՆԻԿ: Հավերժություն կպահանջվի, որ դու վստահություն ձեռք բերես ընկերոջդ հանդեպ: Գիտես, թե սերն ինչ է, բայց շատ խոցվող ես: Միայն մեկ անգույշ բառ ընկերոջդ կողմից, ու դու մտածում ես նրա հետ հարաբերություններդ խզելու մասին: Դա կարող է նրան հոգնեցնել: Դու պիտի հասկանաս, որ յուրաքանչյուր մարդ վաղ թե ուշ հիասթափություն է ապրում:

39 - 48 միավոր: ԱՆՍԱՆՁ ՁԻՈՒԿ: Դու միշտ լցված ես էներգիայով: Ստիպված չես օգնություն խնդրել, քանի որ շատ ուժեղ ես: Քո սիրելին պետք է համակերպվի այն մտքի հետ, որ քո ընկերախումբը քեզ համար նույնքան թանկ է, ու քեզ դուր չեն գա հետապնդումները: Կարող է պատահել այնպես, որ նա ծանծրանա այդ ամենից ու որոշի փնտրել «շնիկի»: Բայց դա կլինի, միայն եթե նա չհասկանա, որ ինքն իրոք թանկ է քեզ համար:



ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀՈՒՄՈՐ

- Վազում է ամբողջ ուժով Վինի թուխը Պիտաչոկի մոտ և գոռում.
-Պիտաչո-ո-ո~կ... Լավ լուր ունեմ...
-Ի՞նչ է, գտել ես իմ կարմիր փուչիկը:
-Ո՛չ... Խոզի միսը թանկացել է ...
- Մի գյուղացու բոստանից անընդհատ ձմերուկ էին գողանում: Վերջիվերջո նա ձմերուկների մոտ մի գրություն է թողնում՝
«Ուշադրություն ...ձմերուկներից մեկի մեջ մկնդեղ կա : Մյուս օրը նա տեսավ, որ ոչինչ չէին գողացել, իսկ գրության մեջ ավելացված է .«Հիմա դրանք երկուսն են ...
- -Աղջիկ, ինչպե՞ս է քո անունը:
-Ջուլբաս...
-Իսկ ինչու՞ այդքան տարօրինակ անուն:
-Դե ծնողներս միշտ շուն էին ուզում...
- Մի անգամ էյնշտեյնին հարցնում են.
-Ո՞րն է լինելու 3-րդ համաշխարհային պատերազմի կարևոր զենքը:
-Չգիտեմ, - պատասխանում է հայտնի գիտնականը, - բայց 4-րդ համաշխարհային պատերազմի կարևոր զենքն է լինելու քարե մուրճը...
- Ուսանողը, մի մեծ մեխ գլխի մեջ, մտնում է բժշկի մոտ: Բժիշկն ասում է .
-Ի՞նչ, հանե՞լ է պետք, 1000 դրամ...
-Բայց իմ մոտ ընդամենը 300 դրամ է ...
-Դե՛, այս դեպքում կարող եմ ծռել, որ չխանգարի...



Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ուսանողի Ձայն»-ը անկախ ուսանողական պարբերաթերթ է: Այն արտահայտում է հայաստանյան բոլոր բուհերում ուսումնառող երիտասարդների կարծիքը՝ անկախ նրանց կուսակցական ու գաղափարական պատկանելությունից: Պարբերաթերթում հոդվածներ են գրում նաև շրջանավարտները՝ առանց տարիքային սահմանափակման: Թերթի խմբագրակազմը պատասխանատվություն չի կրում առանձին հոդվածների բովանդակության համար, եթե, իհարկե, այն չի հակասում խմբագրակազմի որդեգրած բարոյական ուղղվածությանն ու չափանիշերին, ՀՀ Սահմանադրությանն ու օրենսդրական ակտերին: Մեր հոդվածագրերը զերծ են մնում անձնական վիրավորանքներով համեմված հրապարակումներից: Մեր թերթը ամբիոն է՝ ոտնահարված իրավունքներով ուսանողներին: Մենք

պաշտպանում ենք ուսանողի արդար իրավունքը, փաստեր չենք աղավաղում, չենք կեղծում, մենք ուսանողի խոսափողն ենք: Մեզ հետ կարող եք համագործակցել և նամակցել՝ գրելով հետևյալ էլեկտրոնային հասցեին՝

usanoghidzayn@rambler.ru

կամ զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝
(010) 521202

կամ պարզապես այցելել մեր գրասենյակ
(հասցե՝ Հանրապետության 30, «Սիմոն Վրացյան կենտրոն»):

Խմբագրակազմ

Խմբագիր՝ Ա.Գասպարյան

Խմբագրական խորհրդի անդամներ՝ Ն.Ծատուրյան, Մ.Կիրակոսյան, Ա.Հարությունյան, Մ.Կարաթորոսյան, Ա.Լալայան, Ս.Պարսյան

Սրբագրիչ՝ Ա.Հարությունյան

Ձևավորող՝ Հ.Ղազարյան